

„ՄՈՒՐՃ“-Ի ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԳՆԵՐԻՆ. Հետևելով մեր բաժանորդների շատերից չափազանց ցանկութեանը՝ ներկա համարով ուղարկում ենք մեր բոլոր բաժանորդներին «Մուրճ» ամսագրի կես տարապ ընդհատ համարների ընդհանրակազմը, որպես զի կցւի 6-րդ համարի վերջում, ով կամենում է 6 հատորը միասին կազմել:

Առիթից օգտուած ենք՝ խնդրելու մեր բաժանորդներին, որ ընդհանրակազմեան թերթիկներով չը զլանան ծանօթացնել «Մուրճ»-ի հետ նրանց, որոնք դեռ ևս բաժանորդ չեն «Մուրճ» ամսագրին:

«Մուրճ»-ին նոր գրողները կը ստանան տարապ ընդհատ համարները:

ՄԱՐԱՇ. Տէր Նահապետեանցին: Ուղարկեցինք Ձեզ «Մուրճ»-ի 5 համարները առանձին ծրարով, իսկ 6-րդ՝ հասարակ բանդերօլով:

ՊՕԼԻՍ. պ. Կ.-ին: Մեր դրական լեզուով ընդունուած է եւրոպական կարգը՝ անծանօթին և ոչ մտերիմ ընկերին՝ «Դուք», «Ձեր» ասել և բացի չը չորհակի գործածել: Տաճկա-հայերը, պրակտիկի մէջ, այդ սովորութիւնը խստութեամբ չեն պահում, երևի տաճկական լեզուի ազդեցութեան տակ: Այդ պատճառով գուցէ Դուք, Պօլսեցիքդ և Տաճկա-հայերդ առհասարակ, չը գիտէք թէ որքա՞ն խորթ է մեզ Ձեր սովորութիւնը: Մենք այդ կարգը չիմացողներին անկիրթների շարքն ենք դասում:

ԻԶՄԻՐ. պ. Միհրան Աղնաւ-նին: «Թե՛նթը» նոր տպագրուած չը կա, իսկ առաջին տպագրութեամբ՝ նա սպառուած է: Բայց կը ներէք, եթէ ասելու լինինք, որ խմբագրութիւնը կողմնակի ցանձնարարութիւններ չի կատարում, իսկ կատարելու դէպքում, նա ստանում է նախ վճարը և ոչ թէ հակառակն է վարում:

ԲԱՔՈՒԻ Մարդասիրական Ընկերութեան 25-ամեայ չորէլեանին, տպելով հանդիսին ստացած հեռագիրների և ուղերձների ցուցակը,

մենք նորնքան ուրախութեամբ տեղ ենք տալիս այստեղ մեր թղթակից-աշխատակից պ. Ա. Զ.-նի նամակին, որից քաղում ենք հետեւեալը.

«Շամախու թեմի սրբազան առաջնորդ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանից, հանդիսից քանի մի օր փտու, ստացւեց մի ուղերձ, որը իւր ժամանակին չէր ստացուել միմիայն այն պատճառով, որ երկաթուղային երթեկուցութիւնը երկար ժամանակ դադարել էր: Այդ ուղերձի մէջ նորին սրբազանութիւնը չափնուում է իւր խնդրութիւնը և ուրախութիւնը հանդիսի առիթով և օրհնում է Ընկերութեանը, որ նա երկար դարեր չաւրատեց»:

Ստացած էր նաև մի հեռագիր Թիֆլիսի Հայոց Բարեգ. Ընկերութեան ընդհանուր ժողովի նախագահ պ. դօքտօր Բադրատ Նաւասարդեանցից:

ԵՐԵՒԱՆ. պ. Յովհաննէս Վարդանեանցին: Հինգ բուրլին ստացանք:

ՇՈՒՇԻ. Պէրսէյ: Ձեր ոտանաւորը խմբագրութեան կողմից ուշադրութեան առնուեց:

ԲԱՔՈՒ. Մելիք: Ձեզից տեղեկութիւններ ենք սպասում:

ԿԱՐՍԻ հեռագրասէր 11 պարոններին: Ձեր «հոգու ամբողջ կարողութիւնից» վեր Դուք սխալ էք գործել. Ձեզ խաբել են, գայթակղել, Դուք խաբել էք, գայթակղել: Կարդացէ՛ք «Մուրճ»-ը լիքը հաւատով, և կը գաք այն եզրակացութեան, որ ալս ամսագիրը զիտէ ճանաչել և գնահատել մարդկանց ոչ այնպէս, ինչպէս Ձեզ սովորեցրած են ցաւօր: Եթէ անցեալով չէք խրատւած, «Մուրճ»-ը ապագայում Ձեզ ցոյց կը տալ, թէ ո՛ւմ դատողութեանը և ուղղամտութեանը Դուք պէտք է հաւատաք:

ԲԱՔՈՒ. պ. Միրզա-Աւագեանցին: Ստացանք մի բուրլին, բայց չ'ողարկեցինք Ձեր հասցէն չ'ունենալու պատճառով: Մի բաց նամակով չափանցէ՛ք: «Բեարամը և Ասլին» արժէ 60 կոպ.:

ՄԻ ՊԱՏԱՍԻԱՆ, Նոցա, որոնք «Յեցեր»-ի Տաճատ Գնթոնու տիպի մէջ ակնարկութիւն են տեսնում Հայրիկի մասին, չափնում ենք, որ «Մուրճ»-ի խմբագրութիւնը, «Յեցեր»-ի ձեռագիրը կարդալիս, ոչ մի թագրած տեղեկեցիա չի նկատել և չի էլ նկատում: Իսկ եթէ այդպիսի տեղեկեցիա նկատած լինէր, նա երբէք չէր թող տալ մի այդպիսի վէպի տպագրութիւնը «Մուրճ»-ի էջերում: Մենք ընդունել ենք պ. Պռօշեանցի վէպը իբրև լոկ վէպ:

որի մէջ դուրս են բերւած ժողովրդի զանազան կարգի ցեցեր: Հալրելիւր ոչ մի դեր չէ խաղում «Յեցեր»-ի մէջ՝ որպէս մի անձ-նաւորութիւն, մի տիպ:

«Յեցեր»-ի մէջ դուրս բերած գիւղական հանգամանքները և տիպերը, մեծից մինչև փոքրը, այնքան ճիշդ են երևում, որ մենք գուշակում ենք, թէ ինչ ահագին հասարակական նշանակութիւն պիտի ձեռք բերի մեր հրատարակած վէպը: Երևանեան նահանգից եկողները պատմել են մեզ այն բարեբար ազդեցութեան մասին, որ արել է «Յեցեր»-ի ընթերցանութիւնը: Ինչ մենք լսել ենք նոցանից, որպէս նաև համալսարանական ուսանողներից, մեզ աւելի ու աւելի հաստատում են այն համոզման մէջ, որ նենգաւորների ջանքերը՝ «Յեցեր»-ին մի ալ լուսաբանութիւն տալ—հրէշաւոր կերպով արհեստական են, Վերջին տարիներում լոյս տեսած վէպերից, Պոօչեանցի «Յեցեր»-ը իւր հասարակական նշանակութեամբ, ըսնում է անկասկած առաջին տեղը: Արհեստական լուսաբանութիւնից ուրախացածները այն ցեցերն են, որոնց դէմ լարւած են մեր շանթերը: Նրանք երևի շատ գոհ են, որ իրանց դիմակները կը ծածկեն լրագրական կռիւներով: «Մշակ»-ը ձեռք օդնական, Բալասան աղալ, Տաճատ Գնթունի և պարոն Խուդօ:

ԱԽԱԼԻԱԼԱՔ. Պ. Գր. Վ. «Թէ խռովարդ»-ը հաւանեցինք և կը տպագրուի: Երկրորդը՝ «Սիրու բերկրանք» չի տպելու:

ՄՕՍԿԻԱ. Պ. ԱՐՄԻԻՆԱՆԻՆ: Թողւեց հետևեալ անգամին. ուչ հասաւ մեզ:

ՎՐԻՊԱԿ. Երես 921, Ֆեօօրովի ոտանաւորի մէջ, առաջին տող վերջին տան՝ «մի գարթէք», պէտք է լինի՝ «մի ջարդիր»: